



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան
անդրադառնալ ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության
համար:**

1 №1 ձևի անասնաբուժական վկայականը տրվում է՝ (1 միավոր)

- 1) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանիների, բեղմնավորված ձկնկիթի, ինկուբացիոն ձվի, սերմնահեղուկի համար:
- 2) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքի (մսի, կաթի, ձվի, մեղրի) համար:
- 3) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող հումքի (բուրդ, մորթեղեն, մազ, փետուրներ, էնդոկրիին գեղձեր, աղիքներ) համար:
- 4) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող կերերի (լրացակերեր, մսայուր, ոսկրայուր) համար:

2 Անասնաբուժական գրանցման ինչպիսի՞ մատյան չկա: (1 միավոր)

- 1) հակահամաճարակային
- 2) համաճարակային
- 3) ոչ վարակիչ հիվանդությունների
- 4) կենդանիների զբոսանքի

3 Ո՞ր կենդանիներն են խլախտով հիվանդանում: (1 միավոր)

- 1) խոշոր եղջերավորները
- 2) մանր եղջերավորները
- 3) ձիերը
- 4) խոզերը

4 Ո՞ր տարբերակում են 2 երևույթներն էլ համապատասխանում դաբաղ հիվանդությանը և նրա հարուցիչին: (1 միավոր)

- 1) բարձր վարակելիություն, բարձր մահացություն
- 2) բարձր վարակելիություն, ցածր մահացություն
- 3) ցածր վարակելիություն, բարձր մահացություն
- 4) ցածր վարակելիություն, ցածր մահացություն

5 Հետևյալներից ո՞րն է համարվում վարակիչ հիվանդությունների բուժման լավագույն միջոցը: (1 միավոր)

- 1) գերիմուն շիճուկի ենթամաշկային ներարկումը
- 2) ֆիզիոլոգիական լուծույթի ներերարկային ներարկումը
- 3) մեծ քանակի թորած ջուր խմեցնելը
- 4) վիտամինային բուժումը

6 Հետևյալներից, ո՞րը համաճարակային պրոցեսի զարգացման պարբերականության փուլ չէ: (1 միավոր)

- 1) հիվանդության դեպքերի ավելացումը
- 2) հիվանդության դեպքերի զարգացման կուլմինացիոն կետը
- 3) հիվանդության դեպքերի քանակի նվազումը
- 4) հիվանդության իսպառ վերացումը

7 Տրված հիվանդություններից ո՞րի հարուցիչը հողային չէ: (1 միավոր)

- 1) սիբիրախտի
- 2) փայտացման
- 3) բոտուլիզմի
- 4) կոլիբակտերիոզի

8 Հետևյալներից ո՞րն է համարվում կենդանիների վարակիչ հիվանդությունների առանձնահատուկ կանխարգելման միջոցառում: (1 միավոր)

- 1) հատուկ եղանակով կերակրումը
- 2) պատվաստումը
- 3) որոշ ժամանակով չշահագործումը
- 4) մեկուսացումը

9 Հետևյալներից ո՞րը համաճարակային օջախի տեսակ չէ: (1 միավոր)

- 1) հանգչող
- 2) ստացիոնար
- 3) բնական
- 4) փոփոխական

10 Տարբեր տեսակի ձկների համատեղ բուժման դեպքում դրանց ո՞ր առանձնահատկությունը հաշվի չի առնվում: (1 միավոր)

- 1) սննդային
- 2) տեսակային
- 3) տարիքային
- 4) սեռային

11 Ո՞րը մեղունների հիվանդություն չէ: (1 միավոր)

- 1) ամերիկյան փտախտը
- 2) նոզեմատոզը
- 3) պիեմիան
- 4) պարկավոր մեղվատրոլը

12 Հետևյալներից ո՞րը հելմինթոսոլուկոպիկ մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) Վայդի
- 2) Ֆյուլեբոռնի
- 3) Դառլինգի
- 4) Քալանթարյանի

13 Դիսպանսերացումը՝ (1 միավոր)

- 1) վերքի մանրագնին հետազոտություն է:
- 2) եզրակացություն է հիվանդության ելքի մասին:
- 3) պլանային կարգով անցկացվող ախտորոշիչ, բուժկանխարգելիչ միջոցառումներ են:
- 4) հյուսվածքաբանական հետազոտություններ են:

14 Ի՞նչ է կոչվում բարակ աղիքների կերպանգվածի կանգը: (1 միավոր)

- 1) կոպրոստազ
- 2) լիմֆոստազ
- 3) խիմոստազ
- 4) խոլիստազ

15 Ո՞րը բրոնխոպնևմոնիային բնորոշ ախտանիշ չէ: (1 միավոր)

- 1) չոր կամ խոնավ հազը, խզզոցը
- 2) շնչահեղձությունը
- 3) սիրտանոթային անբավարարվածությունը
- 4) լորձաթաղանթների դեղնությունը

16 Հետևյալներից ո՞րին է բնորոշ ցավագին միզարտազատությունը: (1 միավոր)

- 1) նեֆրոսկլերոզին
- 2) ուրոցիստիտին
- 3) էնդոմետրիտին
- 4) նեֆրիտին

17 Ո՞ր կենդանու հղիության միջին տևողություն է 340 օր: (1 միավոր)

- 1) կովի
- 2) գումեշի
- 3) գամբիկի
- 4) ուղտի

18 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված ծննդաբերության հաջորդականությունը: (1 միավոր)

1. արգանդի վզիկի բացում, 2. ընկերքային փուլ, 3. պտղի արտաքսում

- 1) 1, 2, 3
- 2) 2, 1, 3
- 3) 1, 3, 2
- 4) 3, 2, 1

19 Ինչպե՞ս են վարվում պայմանական պիտանի մսեղիքի հետ: (1 միավոր)

- 1) օգտահանում են
- 2) այրում են
- 3) վերամշակում են
- 4) բաց են թողնում վաճառքի առանց սահմանափակումների

20 Ըստ վիճակագրական տվյալների՝ հետևյալ կենդանական տեսակներից ո՞րի ցիստիցերկոզով վարակված մսեղիքից է մարդն առավել հաճախ վարակվում: (1 միավոր)

- 1) տավարի
- 2) խոզի
- 3) ոչխարի
- 4) ճագարի

21 Հետևյալներից ո՞րն ախտահանության մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) քիմիական
- 2) կարանտինացման
- 3) Ֆիզիկական
- 4) կենսաբանական

22 Հետևյալներից ո՞րն է դեղանյութերի ներմուծման պարենտերալ ուղին: (1 միավոր)

- 1) բերանային
- 2) ենթալեզվային
- 3) ենթամաշկային
- 4) ուղիղ աղիքային

23 Մննդանյութերի այն քանակությունը, որը նախատեսված է կենդանու մեկ օրվա պահանջը բավարարելու համար կոչվում է՝ (1 միավոր)

- 1) սնուցում
- 2) կենսաբանական ակտիվություն
- 3) կերակրման նորմա
- 4) բտում

24 Ինչո՞վ է պատված ոսկորի արտաքին մակերեսը: (1 միավոր)

- 1) աճառային հյուսվածքով
- 2) շարակցահյուսվածքային ամուր շապիկով
- 3) ֆիբրոզային թիթեղներով
- 4) սպունգաձև նյութով

25 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված որոճողների կրծքային վերջույթների հետևյալ հոդերի տեղադրման հաջորդականությունը: (1 միավոր)

1. արմունկ, 2. կապ, 3. պսակ, 4. դաստակ

- 1) 1, 2, 3, 4
- 2) 2, 1, 4, 3
- 3) 1, 4, 2, 3
- 4) 4, 2, 3, 1

26 Ո՞ր հորմոնն է կարգավորում վահանազեղձի ֆունկցիան: (1 միավոր)

- 1) ադրենոկորտիկոտրոպ
- 2) պրոլակտին
- 3) օքսիտոցին
- 4) թիրեոտրոպ

27 Ի՞նչ է ռեֆլեքսը: (1 միավոր)

- 1) Ընկալչական դաշտը կազմող ընկալիչների միագումարումն է:
- 2) Օրգանիզմի պատասխան ռեակցիան է գրգռիչների նկատմամբ:
- 3) Գրգռիչի ազդման պահից մինչև պատասխան ռեակցիան ընկած ժամանակն է:
- 4) Նյարդային բջիջների ընդհանուր գործնեությունն է:

28 Հետևյալներից ո՞րն է մարսողական օրգանների տեղադրման ճիշտ հաջորդակա նությունը: (1 միավոր)

1. բարակ աղիք, 2. ըմպան, 3. հաստ աղիք, 4. ստամոքս

- 1) 2, 4, 3, 1
- 2) 4, 2, 1, 3
- 3) 4, 1, 2, 3
- 4) 2, 4, 1, 3

29 Ո՞ր դեպքում է դրվում պատուհանավոր զիպսային կապ: (1 միավոր)

- 1) բաց կոտրվածքի
- 2) սալջարդի
- 3) ոսկրահոդախտի
- 4) օստեոարթրոզի

30 Հետևյալներից, ո՞րը դեկորատիվ կենդանի չէ: (1 միավոր)

- 1) գերմանական մուկը
- 2) շինշիլան
- 3) ծովախոզուկը
- 4) ճահճային առնետը

31 Կենդանիների հետևյալ 3 հիվանդությունների հարուցիչները *չեն* փոխանցվում մարդուն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. սիբիրախտի
2. բրուցելոզի
3. աֆրիկյան ժանտախտի
4. տուբերկուլոզի
5. խշխշան պալարի
6. մաշկի հանգուցային բորբոքման (սողուլար)
7. սալմոնելոզի

32 Տրված հատկանիշներից 3-ը *չեն* վերաբերում խշխշան պալարի հարուցիչին: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. պարուրաձև
2. անաերոբ
3. հողային
4. մորակավոր
5. գրամ դրական
6. սպորավոր
7. պատիճավոր

33 Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդություններ *չեն* կարող ախտորոշվել: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. համաճարակաբանական
2. ուլտաձայնային
3. շիճուկաբանական
4. բախման
5. վիրուսաբանական
6. շոշափման
7. մանրէաբանական

34

Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդությունների հարուցիչները չեն թափանցում կենդանու օրգանիզմ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. շնչուղիներով
2. միզուղիներով
3. սեռական
4. վերմաշկային
5. եղջրանյութի
6. բերանային
7. քրտնագեղձի

35

Տրվածներից 3-ը արու կենդանիներին ամորձատելու եղանակներ չեն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. բաց
2. արյունային
3. քիմիական
4. ճառագայթային
5. մեխանիկական
6. կենսաբանական
7. խարելով

36

Տրվածներից 3-ը սիբիրախտով կասկածվող մսեղիքի հետ սպանդի ընթացքում վարվելու վերաբերյալ ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Ուղարկում են օգտահանության:
2. Վերցվում են կենսանմուշներ և ուղարկում են լաբորատոր հետազոտության:
3. Մսեղիքը տեղափոխում են խորը սառեցման:
4. Դադարեցնում են սպանդը:
5. Մսեղիքը ջերմամշակում են:
6. Մսեղիքը վերամշակում են կերակրի աղի միջոցով:
7. Ոչնչացնում են մսեղիքը այրման միջոցով:

37 **Տրվածներից 3-ը մաստիսների տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կատարային
2. ինդուրացիոն
3. թարախային
4. գանգրենային
5. ֆիբրինոզային
6. դերմատիտային
7. հետաճ

38 **Վիժաճ պտուղները համարվում են ախտաբանական նյութ, եթե կենդանիները հիվանդանում են հետևյալ հիվանդություններից 3-ով: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. բրուցելոզ
2. խշխշան պալար
3. պաստերելոզ
4. կամպիլոբակտերիոզ
5. կատաղություն
6. բոտուլիզմ
7. լեպտոսպիրոզ

39 **Հետևյալ վիրուսային հիվանդություններից 3-ով կարող են վարակվել հավերը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. գրիպով
2. լեյկոզով
3. սալմոնելոզով
4. կոլիբակտերիոզով
5. միկոպլազմոզով
6. մարեկով
7. պաստերելոզով

Հետևյալներից 3-ի վնասագերծման նպատակով կիրառվում է իվերմեկտին պատրաստուկը: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. միկրոբների
2. վիրուսների
3. կլոր որդերի
4. քոսի տզերի
5. սնկերի
6. արոտային տզերի
7. նախակենդանիների